չագիր» կամ «թարգմանչացն գրած» արտայայտութիւնները ցոյց են տալիս, թէ Հաղբատի մատենադարանի մէջ հին ձեռագիրներ եւս կային պահուած, բացի տեղում պատրաստուածներից, որոնցից մէկի մասին՝ Ն (= 951) թուականից՝ հաստատ տեղեկութիւն ունինք (*)։

Փ.

Տարաբաղդաբար մեր նկարագրած շրջանից գեղարուեստական ուրիշ ձեռագիրներ չեն հասել մեզ, որով կարողանայինք աւելի լրիւ և բազմակողմանի գաղափար կազմել Հաղբատի մանրանկարչական դպրոցի մասին. միայն մի ձեռագիր ունինք աւետարանից զատ՝ ոչ չքեղ նկարազարդուած, բայց բաւական՝ տեսնելու նորա գրչութեան եւ մանրանկարչութեան արուեստի աղնուութիւնը։ Ձեռագրի բովանդակութիւնն է Եսայի և Պօղոսի 14 թղթերը իրենց նախադրութեամբ և ցանկով. գրուած բամպակեայ թղթի վերայ, արեւելեան գեղեցիկ բոլորգրով. երկսիւն՝ իւրաքանչիւրը $16\frac{1}{2} \times 5$ սմ. մեծութեամբ։ Գրիչն է, հաւանօրէն և նկարիչը, Առաքել քահանայ, ստացողը Ցունան քահանայ, կազմուած ՈԾԸ (= 1209) թուին, «ձեռամբ իմոյս (ա)խմարհեաւ Սուքիասի»։ Գրութեան տեղը ջնջուած է, բայց անկասկած է, որ Հաղբատն է. «Գրեցաւ խոշորագիր գրով գիրքս այս ձեռամբ նուաստ եւ ամենամեղ քահանայի Առաքելոյ, ի սուրբ եւ ի հռչակաւոր ուխտս. . . (ջնջուած), ընդ հովանեաւ սրբոյ Նշանիս եւ մաւրս լուսոյ կաթուղիկէի, յառաջնորդութեան. սբ. հայրապետիս մերոյ տն. Յոհանիսի։ Ի թուիս հայոց ՈԾԶ»։ Ձեռագիրն, ուրեմն, ժամանակակից է մեր աւետարանին և նոյն Տ. Յովհաննէս Ա-ի ժամանակ պատրաստուած, ինչպէս և աւետարանը. նկարչութիւնը թէև պարզ, առանց մեծ մանրանկարների, միայն սկզբնազարդեր, մանրանկարչական տառեր և լուսանցքի զարդեր, բայց անպայման կարող գրչի և արուեստագէտի գործ, զուտ արևելեան մոտիւներով, ինչպէս և մեր բերած օրինակներն են ցոյց տալիս (*)։ Սորանով մի իրական նոր ապացոյց եւս ունինք, որ մեր աւետարանի արուեստագէտները, Յակովբ գրիչ և Մարգարէ նկարիչ, բացառիկ երևոյթ չէին իրենց ժամանակի համար. Հաղբատի հոգևոր և գեղարուեստական կեանքի այն ծաղկեալ շրջանը, ինչպէս տեսանք նախընթաց պրակի մէջ, եւ երբ ապրում էին մեր արուեստագէտները, պէտք է ուրիշ նման գործեր եւս արտադրած լինէր. գոհ լինինք, որ, գոնէ, այս ձեռագիրը ձեռքի տակ ունինք, որ իւր մանրանկարչութեան եւ գրչութեան որակով շատ պատուաւոր տեղ պիտի բռնէ մեր արուեստի պատմութեան մէջ, գաղափար տալով Հաղբատի դպրոցի մասին։

Մարգարէի մանրանկարչութեան առանձնայատկութիւնների մասին առիթ ենք ունեցել մատնանշելու հարկաւոր տեղերում՝ նկարագրութեան ժամանակ (պրակ Դ–Զ). այստեղ կը կամենայինք նորա արուեստի ամփոփ գնահատականը տալ։ Մանրանկարչական, հին արուեստի մէջ, առհասարակ, արուեստագէտը շատ էր կաշկանդուած աւանդական տուեալներով. այդ պատճառով էլ նրանցից շատերը պարզ արտանկարողի դերումն են, հետևելով իրենց օրինակներին. միայն տաղանդաւորներն են, որ աւանդականի վերայ իրենց անհատական դրոշմն են դնում տեխնիկայի առաւելութիւններով և նոր ստեղծագործութիւններով ու գծերով։ Արտաքին ձևերից ու գծերից զատ, յատկապէս զարդագրութեան նկատմամբ, շատ կարևոր դեր են կատարում գոյների համադրութիւնն ու ներդաշնակութիւնը, նրանց կենդանի, խօսուն առանձնայատկութիւնը, կախարդական հրապոյրը, որ արևելքի գեղեցկագիտական ճաշակի և մտքի արտայայտութեան միջոցներ են։ Մարգարէի արուեստի առաւելութիւնն է և գնահատելի կողմը,

(*) Երզնկեան. 48։

(*) Ձեռ. Էջմ. N 203|194. Ձեռագիրը յետոյ անցնում է ոմն Սարգիս աբեղայի ձեռքը. որ ՉՁԱ = 1332 թուին նուիրում է Դաստակերայ եկեղեցուն Տէր Սարգսի առաջնորդութեամբ։ Դաստակերը գտնւում է Արցախի մէջ, Թարթառ գետից դէպի ձախ, Եղիշէ Առաքեալ կամ Ջըրվըշտիկ վանքից դէպի արևմուտք, Տօնիշէն գիւղին հասած։ Ցիշատակարանը 254 աս։ Բարխուդարեան. Արցախ. 233։